ԼՈՌԵ ՔԱՂԱՔԻ ՄԱՏՈՒՌ-ԴԱՄԲԱՐԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԿԱՎԱՆՈԹՆԵՐԸ

Երևանի պետական համալսարանի հնագիտական արշավախումբը 1966 թ. սիստեմատիկ պեղումներ է կատարում Ստեփանավանի շրջանի Լոռե ամրոցում։

1967 թ. պեղումների ժամանակ արշավախմբի ուշադրությունը գրավեցին միջնաբերդի ներսում, պաշտպանական պարսպապատից 60—70 մետր հարավ և «քաղաքացիական շենք» կոչվածից 25—30 մետր արևելք գտնվող, իրար վրա թափված շաղախի մեծ կույտերը։ Առաջին իսկ հայացքից պարզ է դառնում, որ այստեղ կանգնած է եղել ինչ-որ մի շինություն, որը հետագայում փուլ է եկել պատերի քարերը հանելու պատճառով։ Ծածկի շաղախի մեջ ժամանակին դրվել են մեծ քանակությամբ կավանոթներ, որոնց բեկորները թափված էին հուշարձանի շուրջը։

Ծածկի շաղախի մեջ նկատվող հարուստ խեցեղենը և շենքի մնացորդները շարժեցին արշավախմբի հետաքրքրությունը։ Պեղումների գիտական ղեկավար պրոֆ. Կ. Ղաֆադարյանի խորհրդով որոշվեց պեղել այդ վայրը, թեև բավականին հեռու էր պեղվող տեղամասի քառակուսիներից։

Աշխատանքն սկսեցինք միաժամանակ շենքի թե՛ ներսից և թե՛ դրսից։ Պեղման ընթացքում բացվեց շինության հատակաձևը և ի հայտ եկան ճարտարապետական մի քանի մանրամասներ, որոնք պարզեցին նրա մատուռ-դամբարան լինելը։ Այս հուշարձանի վերաբերյալ վկայություններ են պահպանվել տեղագրական ուսումնասիրողների և օտար ճանապարհորդների մոտ։ 1840-ական թթ. Լոռե բերդ այցելած ռուս ճանապարհորդ Մուրավյովը դրում է. «Մյուս եկեղեցին, որը մոտենում է հունականին, ավելի հայկական է։ Շարված է գրանիտե քարերից, ունի խաչաձևվող կամարներ և բարձր գմբեթ»[1]։ Նույն այդ հուշարձանի մասին 1890-ական թթ. Ռսահակ Հարությունյանը ավելի մանրամասն գրում է. «Արևելյան պարսպից ոչ հեռու գտնվում է մի փոքրիկ, անույշ, կամարակապ և սրբատաշ քարերից շինված մի քառակուսի շենք 5 արշին և 13 վերշոկ մեծությամբ, այդ շենքը թե՛ դրսի և թե՛ ներսի կողմից կառուցված է եղել սրբատաշ քարերից, բայց այժմ դրսի պատերի քարերը բոլորը քանդել ու տարել են՝ երևի նոր շինությունների համար։ Արևելյան պատի վրա կան երեք կամարակապ խորաններ, որոնք երևի պատարագամատույց խորաններ են եղել. ավանդությամբ, այս շենքը համարվել է Դավիթ Անհողին թագավորի կնոջ դամբարանը։ Պատմում են, որ երբ թաթարները տիրում են քաղաքին՝ քանդում են այդ դամբարանը գանձ կամ թանկագին իրեր գտնելու հույսով և ոսկորները հանելով այրում են։

Այս շենքի մուտքի աջ կողմի մի քարի վրա գտնվում է մի եղծված արձանագրություն, որից որոշվում է թվականը. «Ի թուականին Զ» (700+551=1251)»[2]։

Պեղման ընթացքում հայտնաբերվեցին այս մատուռին վերաբերող շինարարական արձանագրության մի բեկորը, խաչաձևվող կամարների փականաքարերը, թաղակապ կամարների քարերի մի մասը, պատի ներսի կողմի սրբատաշ շարքի քարերից մի քանի հատ և այլն։

Ճարտարապետական մանրամասների օգնությամբ արշավախմբի ճարտարապետ Ս. Մաթևոսյանին հաջողվել է տալ մատուռի վերակազմությունը։ Հետագայում պրպտումները պարզեցին, որ այս նույն շենքին պատկանող հինգ որմնասյուներ գտնվում են Լոռի-բերդ գյուղի այժմյան գերեզմանատանը, Ագարակ գյուղում, միջնաբերդի տերիտորիայում և այլուր։ Լոռի-բերդ գյուղում են գտնվում այդ նույն շենքին պատկանող որմնասյան խարիսխներից երկուսը։

Որմնասյուներն ու նրանց խարիսխները իրար չեն կրկնում և ձևով տարբեր են։ Այդ կիսասյուներից մի քանիսը պատից դուրս եկած մասում ունեն բաղմանիստ ձև, իսկ մյուսները կլոր են։ Նույնը նշմարվում է նաև խարիսխների վրա։ Այս երևույթը լայն տարածում էր ստացել հայկական միջնադարյան ճարտարապետության մեջ և ցույց է տալիս մեր քարգործ վարպետների ոարձր արվեստը, նուրբ ճաշակը։

Պեղումներից հետո պարզվեց, որ մատուռ-դամբարանը ներսի կողմից ունեցել է պատերի տակ կանգնած ութ որմնասյուներ։ Այդ որմնասյուները հենվել են բավականին լավ մշակված խարիսխներին։ Որմնասյուներն ավարտված են եղել խոյակներով, որոնց վրա հենվել են շենքի ներսում ձգվող և իրար հետ խաչաձևվող չորս կամարները։ Կամարները իրենց հատման կետում ունեցել են փականաքարեր (նկ. 1), որոնց դեպի ներս նայող կողմերի ճիշտ կենտրոնում կան իրարից խիստ կերպով տարբերվող, զանազան մեծության կլոր կամ երկարավուն ձևավոր զարդեր։

---

1 Муравьев, Грузия и Армения, СПБ, 1848, էջ 296։

2 Ռ. Հարությունյան, Աշակերտի հիշատակարան, տե՛ս «Լումա» ամսագիր, 1897, գիրք I, էջ 250։

Հավանաբար փականաքարերի վրա հենվել է գմբեթը, որի ձևը մեզ անհայտ է։ Ռուս ճանապարհորդ Մուրավյովի վերոհիշյալ վկայությունից կարելի է կռահել, որ մատուռ-դամբարանի գմբեթը չի տարբերվել միջնադարյան նույնատիպ մյուս կառույցների գմբեթներից։ Ականատեսների վկայությամբ, մատուռի գմբեթը կանգուն է եղել մինչև XX դ. սկիզբը[3]։

Մատուռ-դամբարանը կառուցված է եղել բավական լավ մշակված բազալտե քարերից։ Նրա պատերի հաստությունը, դատելով հիմնապատի հաստությունից, պետք է լիներ 100—105 սմ։ Երեսապատման սրբատաշ քարերից տեղում պահպանվել են երեքը, ընդ որում միայն ներսի մասում։ Քարերի մոտավոր չափերն են. երկարությունը՝ 60—70 սմ, բարձրությունը՝ 40 սմ։

Երեսապատման շարքի քարերը բարակ են։ Մատուռի կառուցման եղանակը բավականին հետաքրքիր է այն իմաստով, որ կառուցող վարպետները, շարքի քարերը բարակացնելով մինչև 20—25 սմ, հնարավորություն են ստեղծել նրա միջի շաղախը բավականին թանձր անել։ Այդ հանգամանքը, ինչպես նկատել է միջնադարյան ճարտարապետության լավագույն գիտակ Թ. Թորամանյանը, խիստ բարձրացնում է շենքի դիմադրողականությունը սեյսմիկ ցնցումների նկատմամբ[4]։

Հիմնապատերը շարված են չեչոտ որձաքարով, իսկ կրաշաղախին խառնել են խոշորահատիկ ավազ, որն զգալի ամրություն է տվել պատերին։ Այդ է պատճառը, որ այդ քարերը այսօր էլ դժվար է բաժանել միմյանցից նույնիսկ երկաթե լինգի միջոցով։ Շաղախը զանգվածային է, հատկապես արևելյան ճակատի երկու անկյուններում, ուր մինչև այժմ մոտ 2 մ բարձրությամբ կանգուն է մնացել։

Մատուռի ներսում, հատակից քիչ բարձր, հայտնաբերվեց մի արձանագրված քար, որը ակներևաբար արևելյան պատից է ընկած։ Արձանագրությունը շինարարական բնույթի է։ Պրոֆ. Կ. Ղաֆադարյանի օգնությամբ կարդացինք այն.

«Ի փրկու [բիւն յ-]
ոգո [(յ) իմո]-յ եւ վասն) Արեւ-
շատուքն եղբայր (ի-)
մու Գրիգորի եւ որ...)
...Սարգսի եւ...»

Այսպիսով պարզվում է, որ շենքը կառուցված է եղել արձանագրության մեջ հիշատակված անձանց հոգու փրկության համար։ Նրանք, հավանաբար, Կյուրիկյան կամ Զաքարյան իշխանական տան ներկայացուցիչներն են, որոնց գերեզմանների վրա էլ կառուցվել է այս մատուռ-դամբարանը։ Դժբախտաբար չի պահպանվել շենքի շինարարական արձանագրության այն հատվածը, ուր հիշատակված պիտի լիներ կառուցման թվականը։ Պեղման ժամանակ մատուռի հատակից ի հայտ եկան մարդկանց մի քանի կմախքների մնացորդներ։



Նկ. 1

Բոլոր գերեզմանները հիմնականում ոչնչացվել էին Լոռի-բերդ գյուղի բնակիչների կողմից 1930-ական թթ.։ Կառույցի պեղումների ավարտից հետո հնարավոր եղավ բեկորների օգնությամբ վերականգնել այն կավանոթների ձևերը, որոնք թեթևության համար գրված են եղել ծածկի շաղախի հաստ տեղերում։ Միջնադարյան Հայաստանի հուշարձանների ծածկերի շաղախի մեջ գրված խեցանոթներ գտնվել են Անիում՝ Առաքելոց եկեղեցու պեղումների ժամանակ, Ամբերդում, Գառնիում, Սևանում, Սիսիանի շրջանի Որոտնավանքում և ուրիշ շատ վայրերում։ Թաղերի վրա ընկնող ծածկի ծանրությունը թեթևացնելու և ձայնի արձագանքը ուժեղացնելու նպատակով շաղախի մեջ խեցանոթներ գնելու սովորությունը լայնորեն կիրառ-

3 Պեղումների ժամանակ, բացի շաղախից, գմբեթին վերաբերող ոչ մի բեկոր չի հայտնաբերվել։

4 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. I, Երևան, 1942, էջ 137—138։

5 Մատուռ-դամբարանը ունեցել է խաչաձևվող կամարներ։ Նման տիպի կամարները լայն տարածում ունեին միջնադարյան Հայաստանի եկեղեցական ճարտարապետության մեջ XI—XIII դարերում (Հաղբատի ժամատուն)։ Լոռեի մատուռը ևս թվագրվում է նույն ժամանակաշրջանով։ Մանրամասն տե՛ս մեր «Լոռե բերդի պեղումները 1966—1967 թթ.» հոդվածը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 1։

վել է նաև Սյունիքի և Գուգարքի ճարտարապետական հուշարձաններում։ Մատուռ-դամբարանի ծածկի շաղախի մեջ գտնված խեցեղենը այդ նպատակի համար չի շինված եղել, այլ հիմնականում կենցաղային է (կարասներ, սափորներ, կժեր և այլն), բայց, ըստ երևույթին, արտադրական թերություններ ունենալու պատճառով կենցաղում չի օգտագործվել։



Նկ. 2

Հայտնաբերված խեցեղենի մեջ առանձնապես աչքի է ընկնում գոտեզարդ նախշերով, կարմիր ներկով ներկված գինու կարասը, որի բարձրությունը 60 սմ է, իսկ գոտու տրամագիծը՝ 45 սմ (նկ. 2)։ Կարասը պատրաստված է կարմրավուն կավից, որի մեջ նկատելի է ավազի խառնուրդ, լավ մշակված է ու հիանալի թրծված։ Ինչպես գիտենք, մեծ կարասներն իրենց ծանրության պատճառով անհնար էր ամբողջովին պատրաստել դուրգի վրա։ Դրա համար մինչև փորի լայնացող մասը պատրաստում էին դուրգի օգնությամբ, իսկ վերին մասերը շինում էին ձեռքով, կավը շերտ առ շերտ իրար վրա դնելու միջոցով։ Մեր ունեցած կարասի օրինակը նույնպես պատրաստվել է այդ եղանակով։ Կարասը ունի չորս ձևավոր կանթ, որոնք նստած են իրանի վերին նեղացող մասի վրա։ Կանթերը պատրաստվել են առանձին և թաց վիճակում ամրացվել իրենց տեղերում։ Կանթերի միացման տեղերը պարզ նկատելի են։

Կարասի շուրթի ստորին մասում, դրսի կողմից, ուռուցիկ երկու շրջանագիծ կա, որոնց վրա սուր գործիքի օգնությամբ, դեռևս թաց վիճակում, արված է իրար հաջորդող մանր փոսիկների շարք։ Այդ շրջանագծի և շուրթի միջև անցնում է ալիքաձև մեկ ուրիշ զարդ։ Կարասը դրոշմազարդ է։ Գոտու վրա պատկերված են վազող եղջերու ու նրան հետապնդող երկու առյուծներ, որոնցից մեկը՝ վազքի ընթացքում, իսկ մյուսը՝ իր զոհի վրա թռչելու պատրաստ դիրքում։ Հետաքրքիրն այստեղ այն է, որ Լոռե բերդում գտնված կարասի վրայի պատկերում նկատվում է շարժում, որով և տարբերվում է նման տիպի դաջազարդ կարասների մեծ մասի վրայի պատկերներից։ Պատկերները դրոշմված են գլանաձև կնիքով՝ կարասը թրծելուց առաջ, դեռևս թաց վիճակում։ Ցափավոր ճնշումով նախօրոք պատրաստված գլանը պտտեցրել են կարասի փորի վրայով և ստացել քանդակադրոշմ պատկերներ, որոնք ուռուցիկ են և պարբերաբար կրկնվում են։ Յուրաքանչյուր հատվածը մյուսից բաժանված է ճյուղավոր, բայց տերևազուրկ ծառի պատկերով, որը խիստ ոճավորված կենաց ծառի վերարտադրությունն է։ Նմանօրինակ կարասներ գտնվել են Հայաստանի միջնադարյան հուշարձանների պեղումներից (Զվարթնոց, Անի, Գառնի, Դվին, Ամբերդ և այլն)[6]։ Նույնատիպ կարասներ գտնվել են նաև հարևան Վրաստանի և Ադրբեջանի միջնադարյան հուշարձանների պեղումներից[7]։

Ուսումնասիրողների կողմից գոտեզարդ կարասները թվագրվել են տարբեր ժամանակներով։ Գ. Ջուբինաշվիլին, օրինակ, դեռևս 1916 թ. այն կարծիքն է հայտնել, թե հայկական դրոշմազարդ կարասներն արդյունք են փոխառության և հանդես են գալիս XIII դարից հետո միայն[8]։ Պրոֆ. Կ. Ղաֆադարյանը, մանրա-

---

6 Г. Чубинов, Декоративное убранство анийских карасов, տե՛ս «Христианский восток», том V, вып. I, Петроград, 1916, էջ 22—41։

Կ. Ղաֆադարյան,, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 193։ Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի—3, Երևան, էջ 78։

Т. А. Измайлова, Керамика из раскопок в Анберде, տե՛ս «Труды отдела истории культуры и искусства Востока», т. IV, Ленинград, 1947, էջ 200—204։

7 В. Левиатов, Старая Ганджа, տե՛ս «Известия» АН Азерб. ССР, 1945, № 8, էջ 50։ В. Джапаридзе, Керамика XI—XIII вв. из Тбилиси, «Вестник» Гос. музея Грузии. им. Джанашия, Тбилиси, 1950, т. XVI—B; И. Джафарзаде, Историко-археологический очерк старой Ганджи, Баку, 1949, էջ 72։

8 Г. Чубинов, նշվ. աշխ.։

կրկիտ կերպով ուսումնասիրելով գոտեզարդ կարասները, մերժում է Ռ. Ջուբինաշվիլու տեսակետը և հանգում այն եզրակացության, որ դրանք պատկանում են IX—XII դարերին[9]։ Գրեթե նույն կարծիքն են հայտնում Գ. Կարախանյանը[10], Գ. Ախմեդովը[11] և ուրիշներ։ Լոռե ամրոցի կարասը նույն ժամանակաշրջանի է և թվագրվում է XI—XII դարերով։

Շաղախի միջից գտնվել են նաև մեկ այլ կարասի բերանի և գոտու որոշ բեկորներ։ Կարասը պատրաստվել է կարմրավուն կավից, ապա թրծելուց հետո ներկվել կարմիր։ Ըստ ձևով կարասը նման է նախորդին, բայց առանց դրոշմի (չափսը նույնն է)։ Այս կարասը ևս պատկանում է XI—XII դարերին։

Բացի վերը նկարագրված կարասներից, Մատուռ-դամբարանի ծածկի շաղախի մեջ գտնվեց նաև մեկ այլ (նկ. 3), իր չափերով համեմատաբար փոքր կարաս, որն ունի բավականին լայն բերանի բացվածք։ Նրա շուրթերը թեքված են դեպի դուրս և շատ գեղեցիկ տեսք են տալիս

Նկ. 3

Նկ. 4

կարասին։ Իրանի վրա ունի ուռուցիկ հինգ շրջագծեր, որոնք իրարից տարբեր հեռավորության վրա են գտնվում։ Այդ շրջագծերից առաջինի և երրորդի արանքում ամրացված են չորս փոքրիկ կանթեր։ Կարասի չափսերն են. բարձրությունը՝ 32 սմ, լայնությունը՝ 43 սմ, բերանի բացվածքը՝ 30 սմ, հատակի տրամագիծը՝ 15 սմ։ Կարասը պատրաստված է դուրգի վրա, վարդագույն կավից։ Թրծելուց հետո ներկվել է և փայլեցվել։ Դա հատկապես նկատելի է պսակի վրա։

Կարասի մնացած մասերում ներկը իր գույնը կորցրել է։ Նույնատիպ կարասներ գտնվել են Հայաստանի տարբեր վայրերի միջնադարյան հուշարձաններում՝ Գառնիում, Անիում, Դվինում, Արոտնավանքում և այլուր։

Մատուռ-դամբարանում գտնված խեցեղենի մեջ աչքի է ընկնում բավականին մեծ սափորը (նկ. 4)։ Նրա չափսերն են. բարձրությունը՝ 45 սմ, գոտկատեղի տրամագիծը՝ 30 սմ, բերանի բացվածքը՝ 9 սմ։ Սափորը պատրաստված է դեղնավուն կավից, որի հետ խառնվել է քիչ քանակությամբ մանր ավազ։ Սափորն ունի բավականին լայն բերան, քիչ ետ փռված պսակ, որից 10 սմ ներքև անցնում է ուռուցիկ շրջանագծի զարդ։ Այդ շրջանագծից հենց սկսվում է բավական մասսիվ կանթը, որն ամրանում է սափորի իրանի լայնացող մասի վրա։ Սափորը պատրաստելուց հետո նրա վզի վրա, դեռևս թաց վիճակում, սուր գործիքի օգնությամբ արված են չորս շրջանագիծ ունեցող ակոսներ։ Կարմիր գույնի ներկի միայն հետքերն են նկատվում պսակի վրա։ Նման սափորներ-

9 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ, էջ 197։

10 Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, նշվ. աշխ., էջ 78—80։

11 Г. Ахмедов, Неполивная керамика Орен-кала IX—XIII вв., տե՛ս МИА СССР, 67, էջ 194—202։

գտնվել են Գառնիի և Որոտնավանքի խեցեղենի մեջ և նույնպես թվագրվում են XI—XII դարերով[12]։

Լոռե բերդաքաղաքի մատուռ-դամբարանի ծածկի շաղախի մեջ հայտնաբերված խեցեղենը իր ղուգահեռներն ունի միջնադարյան Հայաստանի հուշարձանների պեղումներից հայտնի խեղեցենի մեջ։ Դա տեղական արտադրանքի արդյունքն է և մի չարք առանձնահատկություններով տարբերվում է այլ հուշարձանների նույնատիպ նյութերից։

Ճարտարապետական մանրամասների և խեցեղեն առարկաների ուսումնասիրությունից ելնելով կարելի է հանգել այն հետևության, որ այս մատուռ-դամբարանը կառուցվել է Կյուրիկյան տոհմի վերջին շառավիղների կամ Զաքարյանների կողմից XII դարի վերջին կամ XIII դարի առաջին տասնամյակներին, մինչև թաթար-մոնղոլական նվաճումները։ Իսկ Ի. Հարությունյանի այն վկայությունը, թե մատուռ-դամբարանի մուտքի քարի վրա նկատել է 1251 թ. կրող արձանագրության հետք[13], պետք է բացատրել հետևյալ կերպ. 1236 թ. թաթար-մոնղոլների արշավանքի ժամանակ մատուռը հավանարար քանդվել է, իսկ հետագայում՝ 1251 թ. վերակառուցվել որևէ մեկի կողմից։

12 Ա. Քալանթարյան, Որոտնավանքի խեցեղենը, տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1967, № 4, էջ 72—73, տախտակ 2-րդ, նկ. 4, 8 և 11։ Բ. Ասաքելյան, Գ. Կարախանյան, նշվ. աշխ., էջ 78։

13 Ի. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 250։

Ի. ՂԱՐԻԲՅԱՆ